Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայտարարվում է մրցույթ՝ <<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Նորատուս գյուղի N1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ֆիզկուլտուրա (18 դասաժամ,) ուսուցչի թափուր տեղի համար:

ՈՒսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին կարող է մասնակցել հաստատության տվյալ թափուր տեղին ներկայացվող՝ <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխանող անձը:

Մրցույթին մասնակցելու համար անձը տնօրենի կողմից նշանակված պատասխանատու աշխատակցին է ներկայացնում՝

1. դիմում (Ձև 1),
2. բարձրագույն կրթության մասին փաստաթուղթ(դիպլոմ)
3. անձնագիր,
4. աշխատանքային գրքույկ,
5. ինքնակենսագրություն (Ձև 4),
6. մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7. այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ,
9. հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում),
10. որակավորման տարակարգ (առկայության դեպքում)

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերը ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև 2019թ. հոկտեմբերի 7-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00 –ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2019 թվականի հոկտեմբերի 10-ին ժամը, 12:00-ին, Գեղարքունիքի մարզի Նորատուս գյուղի N1 միջնակարգ դպրոցի շենքում:

Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, գ.Նորատուս, Խ.Աբովյան 6: Հեռախոս (093)24-94-00: